# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 23 նոյեմբերի 2016թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Կյուրեղյան, Պ. Ֆրենգյան, Վ. Համբարյան, Ա. Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան

**Օրակարգ**
**հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

1. **Տեղեկություն «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/1» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին.**

«Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/1»** ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրը՝ **2016 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 14:00-ին,** ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները.**

«Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/1»** ծածկագրով «Գրասենյակային գույք»-ի գնման ընթացակարգին, որոնք խմբավորված են 13 չափաբաժիններում, հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝

| N | Մասնակցի անվանումը | Հասցե, հեռ. |
|---|---|---|
| 1 | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | Ք. Երևան, Լենինգրադյան 48/5-19, հեռ. (094) 932341 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

3. **Տեղեկություն «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/1» ծածկագրով մրցույթի գնման առարկայի չափաբաժինների ընդհանուր նախահաշվային գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /Այսուհետ Կարգ/ 44-րդ կետի առաջին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի գինը(ՀՀ դրամ) | Գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպումների սեղան | հատ | 2 | 113000 | 226000 |
| 2. | Կլոր սեղան | հատ | 1 | 76500 | 76500 |
| 3. | Գրասենյակային սեղան | հատ | 5 | 79250 | 396250 |
| 4. | Ֆիքսված դարակ | հատ | 5 | 38800 | 194000 |
| 5. | Փաստաթղթերի պահման պահարան | հատ | 4 | 101000 | 404000 |
| 6. | Փաստաթղթերի պահման պահարան | հատ | 1 | 105000 | 105000 |
| 7. | Փաստաթղթերի պահման պահարան՝ մետաղյա | հատ | 2 | 176500 | 353000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | Աթոռ՝ գրասենյակային, մետաղյա կարկասով | հատ | 25 | 10040 | 251000 |
| 9. | Աթոռ՝ գրասենյակային, մետաղյա կարկասով | հատ | 3 | 9640 | 28920 |
| 10. | Աթոռ՝ ղեկավարի | հատ | 1 | 57700 | 57700 |
| 11. | Կախիչ՝ գրասենյակային | հատ | 1 | 41700 | 41700 |
| 12. | Զգեստապահարան | հատ | 2 | 60500 | 121000 |
| 13. | Լաբորատորիայի սեղան | հատ | 4 | 91000 | 364000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

4. **Տեղեկություն հայտեր պարունակող ծրարներ կազմման և ներկայացման համապատասխանության մասին.**

«Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

5. **Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջների համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

6. **Տեղեկություն մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին.**

**Հայտարարվեց հայտ ներկայացրած միակ մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը.**

(ՀՀ դրամ)

| Չ/հ | Մասնակցների անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 205000 | 20000 | - | 225000 |
| 2. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 70000 | 6000 | - | 76000 |
| 3. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 350000 | 45000 | - | 395000 |
| 4. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 175000 | 17500 | - | 192500 |
| 5. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 360000 | 40000 | - | 400000 |
| 6. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 97000 | 8000 | - | 105000 |
| 7. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 320000 | 30000 | - | 350000 |
| 8. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 225000 | 24000 | - | 249000 |
| 9. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 27000 | 1500 | - | 28500 |
| 10. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 52000 | 5000 | - | 57000 |
| 11. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 37000 | 3000 | - | 40000 |
| 12. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 106000 | 11000 | - | 117000 |
| 13. | «Մեթր-Սթիլ» ՍՊԸ | 316000 | 32000 | - | 348000 |

**Հանձնաժողովը որոշեց.**

1. **Ընթացակարգի 1-13 չափաբաժինների առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակցի:**

2. **Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

7. **Տեղեկություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը[1]:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

8. **Տեղեկություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.**

**«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/1»** ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա **2016 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 14:00-ին**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** Հ. Սաքեյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Հ. Կյուրեղյան

Պ. Ֆրենգյան

Վ. Համբարյան

Ա. Մարկոսյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Տ. Մարգարյան

---

[1] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:*